ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հունիսի 2026թ. թիվ 384-Ա

Ս.ԱՐՇԱԿՈՒՆՈՒՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի հունիսի 3-ի թիվ 381-Ա որոշումը և հաշվի առնելով Ս.Արշակունու համաձայնագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Սիրանուշ Արշակունուն՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Սիրանուշ Արշակունուն տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. հունիսի 4
ք.Վանաձոր